

2281

206

ԺԵՐՈՒՆ ՎԻՐԱԲԵԱՆ

Մ Ի Ս Ա Ք

ՎՕԴ. ՄԷԿ ԱՐԱՐԻԱՆՈՎ



1913 Ե Ր Ե Ի Ա Ն

Տպարան „ԼՈՅՍ“ Արշակ Յակոբեանցի

1933

ԺԵՐՈՒՆ ՎԻՐԱՅԵԼՆ-

կ. Զաք. Վարդանյանի

1922/16

Մ Ի Ս Ա Ք

ՎՕԴ. ՄԷԿ ԵՐԵՐԻԵՎՈՎ



1913 Ե Ր Ե Ի Ա Ն

Տպարան „ԼՈՅՍ“ Արշակ Յակոբյանցի

Ն Ի Է Ր

ՊԱՏԿԱՆ ՏԷՐՈՒՆԵԱՆԻՆ

Հեղինակից.



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՎԱՐԴԱՆ — Զամախարանաւարտ ուսուցիչ՝ 28 տարեկան.

ՄԱՐԻԱՄ — աշակերտուհի՝ 19 տար } Վարդանի ծանօթու-

ԵԻԳԻՆԷ — նոյնպէս՝ 18 տարեկան. ~~եղբայր~~ } հիները.

ՄԻՍԱԲ — Վարդանի ծառան՝ 23 տարեկան.

Տեսարանը ներկայացնում է վարդանի սենեակը ունի միայն մէկ դուռ, տանող գետի միջանցքը. Սենեակը շատ մաքուր է եւ սիրուն կահաւորած, մի անկիւնում գրած է մի սուեղուկ, որտեղ պահւած է վարդանի հազուատները: Կայ մի հայելի միջին սրահից կտիւյն, նրա ստույգ կտրած է մի սեղան, վրան խոզանակ, սանրեր գրքերը եւ շարած են մի քանի պիտոներ:

Տ Ե Ս Ի Լ Ի.

ՎԱՐԴԱՆ և ՄԻՍԱՔ.

ՎԱՐԴԱՆ—Միսաք, գիտե՞ս, ես գործ ունեմ գնում եմ. (ըստ կտուր է սենեակում ման դալ) տանը մնայ, որովհետեւ կարող եմ իմ ծանօթ աղջկերանցից գան. և եթէ ինձ հարցնելու լինեն, կասես, որ մի քիչ սպասեն, կամ գնան և քիչ ժամանակից յետոյ գան, որովհետեւ եթէ մնան այստեղ, ի՞նչ պէտք է անեն. բացի քեզանից ոչ ոք չկայ, որ հետը խօսեն, շորերդ էլ կեղտոտ են, բացի այդ, եթէ մի բան հարցնելու լինեն, չես կարող քաղաքացու-պէս պատասխան տալ. նրանք էնպէս աղջկերք են, որ քաղաքացու խօսելուն իսկի չեն հաւանում ուր մնաց քո խօսալուին:

ՄԻՍԱՔ—Ձէ, վարդան աղայ, դու խօսալու հմար դարդ մի անի, էս ա դուզ աարի ու կէս ա, դր ըստեղ եմ. ոնց որ դու, քո ծանօթները գալուս խօսում է ես էլ ընէնց կխօսամ:

ՎԱՐԴԱՆ—Ա՛յ, տեսնում ես, շփոթւում ես. պէտք է ասես, «համար»: ասում ես «համար» և այլն, ո՞ր խօսքն ասեմ, որ սխալ չէր:

ՄԻՍԱՔ—Էդ քու հետ եմ ըսէնց խօսում, նրանց հետ էլ հօ ըստեց չեմ խօսիլ:

ՎԱՐԴԱՆ—Տեսա՞ր, էլի ասեցիր «քո» այն ինչ, պէտք է յո՞՞նակի խօսել: Միսաք, ով որ էլ լինի, ամեն մի խօսալուդ մէջ,

պէտք է քեզ զգոյշ պահես, մանաւանդ, օրիորդների հետ, որովհետեւ եթէ մի բան նկատեցին, օ,.. Աստուած հեռու տանի:

ՄԻՍԱՔ—Սայտառակ կանեն չէ...

ՎԱՐԴԱՆ—Հա՛, հա՛. (սպուլըս).

ՄԻՍԱՔ—Համա վարդան աղայ, միամիտ մնայ, ես լաւ ճամբու կդնեմ:

ՎԱՐԴԱՆ—Ուրեմն եթէ մնան, լաւ կարող ես խօսել:

ՄԻՍԱՔ—Լաւ կը խօսեմ, լաւ...

ՎԱՐԴԱՆ—Ուրեմն ասա, թող մնան մինչև գալս. դէ ես գընում եմ. (ուզում է գնալ, բայց նորից Միսաքին է նայում) ախր շորերդ կեղտոտ են:

ՄԻՍԱՔ—Բան չկայ, շորերս է փիս... Դրան էլ մի ճար կանեմ: Վարդան աղայ, դրանք որ պէտքս գան, էլ են եկել:

ՎԱՐԴԱՆ—Ձէ, դրանք չեն եկել՝ նու գնում եմ, յուսով եմ որ լաւ ճանապարհ կը դնես:

ՄԻՍԱՔ—(Սեղանի վրայից վերցնելով խոզանակը) Վարդան աղայ, եաւաշ շորերդ սրբեմ նոր գնայ:

ՎԱՐԴԱՆ—Նու, բեր սրբի, շուտ:

ՄԻՍԱՔ—(Սկսում է սրբել լուծթիւն մինչև վերջացնելը):

ՎԱՐԴԱՆ—Դէ ես գնում եմ, Միսաք էլ չեմ ասում,

ՄԻՍԱՔ—Գնա, դարդ մի անի. (Վարդանը գնում է)

Տ Ե Ս Ի Լ Ի

Միսաք (միայնակ)

ՄԻՍԱՔ—(Ժողովրդին) Էս շատ լաւ ըլաւ. սկի մէք ասիլ որ շատ լաւ ըլաւ: Ես գաթի չուգեցայ սալիպթ էրթալ, որ դամ ըստեղ լաւ տեղ ծառայութեան մտնեմ, աղջիկները միշտ գան, էթան ես էլ հետները խօսամ ծանօթանամ:

Եւ մինչև երբ է՞. մինչև երբ էդպէս մնամ, մինչև երբ, ծանօթ աղջիկներ չունենամ. ես հօ չեմ եկել էստեղ մենակ փող աշխատել:

տիւր, կամ ապրելու մեր տանը հաց չկար, որ ես ուտէի, ապ-
բէի, ես եկիւ եմ էստեղ մարդ դառնալու, որ պէտք է էգուց էլօր
իմ բաժինը հօրիցս առնեմ դամ էստեղ, քաղաքում ապրեմ, թէ
չէ ես հօ մի քանի կոպէկի կարօտ չեմ: Համ էլ տօ աշխարհիցը
խնչ պիտի տանեմ է, տօ էս աշխարհը վուչ է փուչ: Էսօր կամ
էգուց չկամ: (Պաուզա) Դէ, հիմի կգան, ոնց անեմ, (նայելով
շորերին) Հը էսէնցով բան կըլի՞ր, էդպէս կանգնեմ նրանց առաջը.
չէ էդպէս չի լինի աւելի լաւ է սրանք հանեմ, Վարդան աղայի
շորերը հագնեմ էդպէս շատ լաւ կըլի՞նի: Դէ շուտ անեմ, թէ չէ
հիմա կգան ամօթ ա, (շորերին նայելով) սրանց վրայից հագնեմ,
թէ հանեմ նոր. չէ աւելի լաւա սրա վրից հագնեմ, որովհետեւ
կարող եմ նրա շորերը հեշտ հագնել՝ հագնեմ էլ թէ չէ էսքանը
հնց հանեմ, բալքի հէնց հանելու ժամանակ նրանք գալիս են
(ինքն իրան ծիծաղելով) Էն վախտը ամօթից կմեռնեմ հա, հա,
հա (լրջանալով): Դէ, շուտ, ծիծաղելու վախտը չի արերեմ...
(Մօտենալով սուղուկին հանում է Վարդանի պիջակը և անդրա-
վարդիկը և սկսում է հագնել) ախպէր ես էլ եմ կամաց կամաց
մարդ դառնում հա. (նայելով շորերին) ես ըսենց շորեր իւկի օ-
րումո չեմ հագած, անտէր մաքուր շորը փայտին էլ որ հագցնեո
կսկսի ինքն իրեն ձէն ածել, ու պար գալ: Համա ախ ուր էր
մի լաւ հարստանայի, յետոյ հօրս հարստութեան կէսն էլ բերէի,
մի լաւ մարդ դառնայի: Ուր էր Աստուած մի ըսենց բան անէր,
ինչ լաւ կը լինէր է, շատ լաւ ~~բա~~ կը լինէր: Համա ինչ ինչի-
կհնտի մարդ դառայ. հիմի էլ ինչս է պակաս. (ժողովորդին)
Հը էլ պակաս տեղ կայ հիմա տեսնեմ երեսս հօ կեղտոտ չի (մօ-
տենում է հայելուն ու սկսում է ձեռները թքոտել ու քսել երե-
սը և մաքրել) Էհ երեսս լաւ էլա հիմա մաքրես մի քիչ զըզըզ-
ւած են, դրան էլ մի ճար կանեմ «վերցնում է սանրը և սկսում
է մաղերը սանրել»: Ասենց աւելի լաւ մարդ դառայ հէրս էլ որ
գայ ինձ չի ճանաչի, Վարդան աղան էլ գայ, էլի չի ճանաչի:

Համա ինչ Վարդան աղայ է, (ժողովորդին) դուզն ասէք
հիմի ես եմ աղէն, թէ նա «լուսթիւն» իհարկէ ես եմ աղայ.
Իմ շորերը նրա շորերից լաւ. իմ մաղերը նրա մաղերից լաւ
սարքւած (ծիծաղելով): Համա չեն իմանում սր աջու ջիբիս տա-
լիս ձախուցը մկնիքը փախչում են. հա, հա, հա, ոնց որ էս օրը
քաղաքի միջով գնում էի. էլի Վարդան աղայի շորերը հագել էի
էլի նրա շլապկէն, սապօկները, բանը, սաղ հագել էնպէս որ ո-
տից մինչև գլուխ կոկեցի: Աղից չէի ջոկում, է իհարկէ տրոս-
տըն էլ ձեռիս, շատերն էլ իմանում էին թէ, աղէքի աղէն եմ.
ամա ջիբումս կապէկ չկար: Էն վաղի մասալէն որ ասում «տը-
րոստը ձեռիս ֆըռֆըռա սոված փորս կըզոզոզ», հէնց իսկ ես էի.
Մի աղքատ եկաւ իմ առաջը բոնեց ու սկսեց «աղայ ջան աղայ
մի ողորմութիւն»: Տօ չոռ աղայ, ցաւ աղա. ես աղայ եմ, շորերս
որ հանեն, էլի քու օրին բան եմ: Է՛ ինչ անեմ, Տէր Աստուած
ինչ հնար անում եմ, էս անպիտան աղքատը ձեռք չի քաշում
ինձնից, ուրիշներն էլ հաւաքւել են շուրջս, ինձ են մտիկ տալիս
ինչ անեմ ամօթից մեռնում եմ, ջիբումս կապէկ չկայ, որ տամ
ոռա անեմ դիւխցս հնց անեմ, վերջը ինձ ձեռքի որպէս թէ չեմ
տեսնում ու ոտատակ տեցի բոլորին ու գնացի: Եւ ճամբին
մտածում եմ, տօ ինչ ես ուզում ինձնից ես էլ քու օրին եմ էլի
հլա դու մի քանի սև կապէկներ ունես, բա որ ես էտ էլ չունեմ
հիմի էստեղա շորերս ուրիշի, ջիբիս էլ մի կապէկ չկայ: Մէկ էլ
էն ասեմ, որ եթէ մարդ լաւ չըք է հագնում պիտի ջիբին մի
քանի կապէկ ունենայ և զընզընգացնի, որ ասեն հա էդ պարոն
վարժապետը փող ունի: (Ժողովորդին) ախպէր լաւ եմ ասում թէ
չէ. մի բան էլ ասեմ, որ մարդ ըտենց լաւ հագնւած ընի, փորն
էլ կուշտ կլնի հա, թէ չէ էդ սոված վախտը մարդկանց մէջ
կզկռտա, ամօթ ա, ծիծաղի բանատեղ կլինի. (նայելով շուրջը)
տեսնամ լաւ ա լաւ ա ոչինչ ճանաչելով ժողովորդին ձեռք բերնին
դնելով» այ թփթփոց ա գալիս եկան, համա որ ես ըտոնց հեռ

կիսուեմ չծիծաղէք հա, (ցածր) թէ չէ ամօթ ա:

ՏԵՍԻԼ III

(Մարիամ, Եւգինէ և Միսաք)

ՄԱՐԻԱՄ և ԵԻԳԻՆԷ — (Դեռ ներս չմտած, դուռը ծեծում են)

ՄԻՍԱՔ — (Մօտենում է դռանը և կամաց բացում): Այդ
 ով է համեցէք:

ՄԱՐԻԱՄ — Ներողութիւն, Վարդանը տանն է:

ՄԻՍԱՔ — Տանը չէ, բայց շուտով կը գայ, համեցէք:

ԵԻԳԻՆԷ — (Մարիամին) Ուշ կը գայ, գնանք:

ՄԻՍԱՔ — Ոչ, օրիորդ հիմի կը գայ, նա ասեց, որ եթէ ինձ
 կը հարցնեն, ասա թող սպասեն, ես կը գամ համեցէք ներս:

ՄԱՐԻԱՄ — Կը գանք միայն թէ շուտ գայ: (Գալիս են ներս)

ՄԻՍԱՔ — (Աթոռները վերցնելով, նախ Մարիամին, յետոյ
 Եւգինէին): Համեցէք օրիորդ, նստեցէք: (Նստում են ապուղա):
 (Միսաքը բաւականին հեռու նստում է մէկ գիրք վերցնելով ըս-
 կում է թերթի):

ԵԻԳԻՆԷ — Ներողութիւն, դուք Վարդանի ծառան էք:

ՄԻՍԱՔ — Ո՞վ եմ (պառլա) ներողութիւն օրիորդ ես ինչ-
 պէս կարող եմ ծառայ լինել:

ԵԻԳԻՆԷ — Ներողութիւն ուրեմն:

ՄԻՍԱՔ — Ոչինչ, բայց ը, յամենայն դէպս պէտք է զգոյշ
 լինել օրիորդ խօսելու ժամանակ:

ՄԱՐԻԱՄ — Ներողութիւն իսկ դուք Վարդանի ինչն էք:

ՄԻՍԱՔ — Ես Վարդանի դպրոցական ընկերներէս եմ:

ՄԱՐԻԱՄ — Այստեղի՞ր դպրոցի:

ՄԻՍԱՔ — Ոչ, երբ Վարդանը արտասահմանում սովորում էր
 այն ժամանակէլ ընկերներէս եմ:

ԵԻԳԻՆԷ — (Միսաքին) Իսկ ձեր հագուստը կարծես բոլոր
 բոլին Վարդանի հագուստը լինի:

ՄԻՍԱՔ — Ո՛հ ինչ էք ասում, միթէ հագուստը հագուստի
 նման չի լինի. միթէ ես այնքան ստոր մարդ պէտք է լինեմ, որ
 նրա հագուստը հագնեմ:

ԵԻԳԻՆԷ — Ներողութիւն պարոն:

ՄԻՍԱՔ — Ոչինչ, բայց յամենայն դէպս վիւ աւուրւում եմ:

ՄԱՐԻԱՄ — Վարդանը ձեզ ինչո՞ւ է թողել ու գնացել:

ՄԻՍԱՔ — Ինձ, որովհետեւ խնդրեց ֆուս, ու ձեզ յայտնեմ
 ֆուսը, մինչև նրա գալը: Ծառայի՞ն հաւատ չընծայեց այստեղ
 ֆուսու. և աւելի յարմար եղաւ իմ ֆուսը և ես ստիպւած եղայ
 յանձն առնել, իբրեւ ընկեր: Ես կարող էի նրա առաջին խնդիրը
 մերժել: Երբ արտասահմանում էինք, նա նոյնիսկ ծառայի դեր
 է խաղացել ինձ մօտ...:

ՄԱՐԻԱՄ — Դուք ինչպէս էք կոչւում, գուցէ ճանաչեմ:

ՄԻՍԱՔ — Ե՞ս «քիչ մտածելով» Աղէքսանդր Իշխանեան.
 «կանգնելով սեղից և գնալով դէպի Մարիամը» Իսկապէս իմ
 կողմից անքաղաքավարութիւն է եթէ չծանօթանամ ներեցէք
 պիտի առաջ ծանօթանայի «Ձեռը մեկնելով դէպի Մարիամը»
 Բարեւ ձեզ Աղէքսանդր Իշխանեան:

ՄԱՐԻԱՄ — Տեղից քիչ կանգնելով» Բարեւ ձեզ Մարիամ
 Յարութիւնեան:

ՄԻՍԱՔ — «Ձեռը մեկնելով դէպի Եւգինէն» բարեւ ձեզ
 Աղէքսանդր Իշխանեան:

ԵԻԳԻՆԷ — Բարեւ Եւգինէ Մանէլեան:

ՄԻՍԱՔ — «Իւր տեղը նստելով» ներեցէք օրիորդներ, ես
 պիտի առաջ ծանօթանայի, բայց խօսելը ինձ պաշարել էր:
 «Մարիամին» դուք ինձ ճանաչեցի՞ք:

ՄԱՐԻԱՄ — Ո՛չ, ձեր անունը ինձ ծանօթ չէ:

ԵԻԳԻՆԷ — «Միսաքին» էս քանի՞ օր է որ դուք այստեղ էք:

ՄԻՍԱՔ — Հազիւ թէ երկու օր լինի:

ԵԻԳԻՆԷ — «Քիչ լուրսից յետոյ» ներեցէք, պարոն հետա-

քրքութեանս վրայ. (ժպտալով) Վարդանի ծառան ձեզ անգամ
կան է:

ՄԻՍԱՔ—Վարդանի ծառան... Ո՛չ ես նրան նոյնիսկ չեմ
ճանաչում, թէ ետեւել եմ:

ԵԻԳԻՆԷ—Որովհետեւ այնքան նմամ էք, ես ուղղակի զար-
մացել եմ:

ՄԻՍԱՔ—Կարող է պատահել: Մարդը մարդունման չի լինի:
ԵԻԳԻՆԷ—Անցեալ կիւրակի օրը վարդանի հետ ման էր
գալիս, իսկ ձեզ նման:

ՄԻՍԱՔ—Հա, որ դուք էլ ասել էիք, Վարդան ձեր ծառան
ինչ կեղտոտ է:

ԵԻԳԻՆԷ—(Զարմացած) Վա, ռրաեղից գիտէք:

ՄԻՍԱՔ—Ինքն ինձ ասաց:

ՄԱՐԻԱՄ—Իսկապէս որ, վատ տղայ է... և ծառաները միշտ
վատ են:

ՄԻՍԱՔ—Ներողութիւն օրիորդ, չէ՞ որ ծառաներն էլ իրենց
հօր որդիքն են: Դուք ձեր հօր համար էք լաւ, նրանք էլ իրենց
հօր համար: Պատահում են ծառաներ, որ նրանք էլ օրիորդի,
մանաւանդ քաղաքացի օրիորդի չեն սիրում:

ԵԻԳԻՆԷ—Բայց ներողութիւն, դուք ինչո՞ւ էք ծառաներին
պաշտպան հանդիսանում:

ՄԻՍԱՔ—Ես ճշմարտութիւնն եմ ասում. ինձ համար միև-
նոյն է, թէ ծառայ, թէ օրիորդ և թէ պարոն: Նոյնիսկ ես խիօք
ծառային շատ եմ սիրում, քան յիմար օրիորդին, կամ պարոնին:
«Պառլզա»:

ՄԱՐԻԱՄ—Օ՞ք, Վարդանը չեկաւ, մենք ուշացանք Եւգինէ:

ԵԻԳԻՆԷ—Այո ուշացանք:

ՄԻՍԱՔ—Միք շոտպիլ օրիորդներ, հիմի կգայ:

ՄԱՐԻԱՄ—Չէ՞, ուշանում ենք:

ԵԻԳԻՆԷ—(Միաքին) Ներողութիւն, ժամացոյց չկայ:

ՄԻՍԱՔ—(Քիչ շփոթւելով) Ապուշը իմ ժամացոյցը հետը
տարել է:

ՄԱՐԻԱՄ—Ինչո՞ւ, նա ժամացոյց ունի, ինչո՞ւ է ձերը վերցրել:

ՄԻՍԱՔ—Իրենը փչացել է, տուել է նորոգելու:

ԵԻԳԻՆԷ—Ինչո՞ւ, հէնց էսօր առաւօտ մօտին էր, փչա-
ցած չէր:

ՄԻՍԱՔ—«Եւգինէին» Օրիորդ, դուք ինձ էսօր շարունակ
վիրաւորում էք, չգիտեմ ինչու: Ախր ինչ կարիք ունիմ ստելու:
(Եւգինէն կարմրում է ամօթից. պառլզա)

ՄԱՐԻԱՄ (Եւգինէին) վեր, վեր գնանք, ուշացանք:

ՄԻՍԱՔ—Սպասէք, գնամ տեսնեմ գալի՞ս է. (կանգնելով,
դուրս է գնում):

ԵԻԳԻՆԷ—Մարիամ, գու մի կարծիր, որ դա ճիշտ է ասում
դա թէ ես ասում է, թէ ես ծառայ չեմ, արտասահմանի ուսանող-
ներից եմ, Վարդանի ընկերն եմ, այդ ամենը սուտ է, բոլորը
կեղծ. —որովհետեւ ես դրան տեսել եմ Վարդանի հետ ծառայի
դեր խաղալիս, ծառայի հին շորերով: Մէկ էլ էդ շորերը որ հա-
գել է, իսկ և իսկ Վարդանի շորերն են: Վարդանը գնացել է
ուրիշ տեղ, այդ առիթից օգտւելով, հագել է նրա շորերը:

ՄԱՐԻԱՄ—Ի՞նչ ես ասում եւգինէ, գիւղացին այդպէս կա-
լի՞ղ է խօսիլ:

ԵԻԳԻՆԷ—Երկամր ժամանակ է, որ դա այստեղ է:

ՄԱՐԻԱՄ—Ինչքան էլ որ լինի, իրեն գիւղացու թեան վար-
մունքները ցոյց կտայ:

ԵԻԳԻՆԷ. Դէ լաւ, հիմի խօս դու ինձ չես հաւատում, յետոյ
կիմանաս. թէ իմ ասածը ռոքան ճիշտ է:

ՄԱՐԻԱՄ—Բայց իմացիր, թէ ի՞նչ ես ասում. գիւղացին
այդպէ՞ս:

ԵԻԳԻՆԷ—Ես որ մի բան իմ աչքով եմ տեսել. էլ ի՞նչպէս
կարող եմ հաւատալ. և հէնց սրանից իմացիր, որ ասեց թէ ծա-

հարին իբր ես վատ եմ ասել. ինչու հէնց ծառան եկաւ դրան ասեց, չէ, Մարիամ, դու մի հաւատար արդէն փորձը ցոյց է տալիս որ դա Վարդանի ծառան է, այլ ոչ ուրիշ մարդ:

ՄԱՐԻԱՄ—Որքան էլ դու ասես, ես չեմ հաւատալ, որովհետեւ ծառան այդպէս չի խօսիլ. դա, եւ զիւնէ անհնարին բան է. դու պէտք է նիստ ու կացից ճանաչես:

ԵԻԳԻՆԷ—Դէ լաւ, թէ իմ ասածը ճիշտ լինի, էն ժամանակ ես գիտեմ, թէ քեզ ինչ կանեմ:

ՄԱՐԻԱՄ—Իսկ եթէ իմ ասածը ճիշտ լինի... բա ես քեզ ինչ կանեմ:

ԵԻԳԻՆԷ—Հէնց սրանից իմացիր, եթէ նա ծառայ չլինէր, իրեն թոյլ կտար, որ գնար իմանալու, թէ Վարդանը զաւրիս է: Թէ ոչ:

ՄԱՐԻԱՄ—Մեր պատուի համար գնաց.

ԵԻԳԻՆԷ—Ի՞նչ պատուի համար. մենք չխնդրեցինք, որ նա գնար, ինքն իրեն վերկացաւ, և գնաց:

ՄԱՐԻԱՄ—Է՛հ լաւ, Եւգինէ, դու ոչինչ չես հասկանում, որ ծառան այդպէս չի լինի, անհնարին բան է:

ԵԻԳԻՆԷ—Դէ լաւ, յետոյ կիմանաս. (Պառուզա):

ՄԻՍԱՔ—(Ներս մտնելով) Ներողութիւն օրիորդներ, Վարդանը չի երևում, բայց եթէ քիչ էլ սպասէք, նա կգայ: (Նստում է):

ԵԻԳԻՆԷ—Վա՛յ, որ չի երևում, կուշանանք Մարիամ.

ՄԻՍԱՔ—(Եւգինէին) Ձէ՛, կգայ:

ՄԱՐԻԱՄ—(Միսաքին) Գուցէ ուշանայ, մենք էլ գործ ունենք:

ՄԻՍԱՔ—Մի քիչ էլ համբերութիւն ունենաք, նա իսկոյն կգայ:

ԵԻԳԻՆԷ—Մի քիչ էլ սպասենք եթէ չեկաւ, մենք կերթանք:

ՄԻՍԱՔ—(Քիչ լռութիւնից յետոյ) Ներողութիւն օրիորդներ, դուք ի՞նչ գրքեր էք կարդում:

ՄԱՐԻԱՄ—Այսինքն ի՞նչ գրքեր, ընթերցանութեան.

ՄԻՍԱՔ—Այո:

ՄԱՐԻԱՄ—Մենք շատ գրքեր ենք կարդացել, անթիւ և կարծեմ աւելորդ է յիշել ու թելել:

ՄԻՍԱՔ—Շատ կարդացէք, շատ, միայն ընթերցանութիւնը մարդուս առջ կտանի, որովհետեւ, եթէ մարդը ընթերցանութեամբ չպարապի, չի կարող դասերով պարապել:

ՄԱՐԻԱՄ—Իհարկէ:

ԵԻԳԻՆԷ—(Մարիամին) Ձէ՛ որ մենք ուշանում ենք:

ՄԱՐԻԱՄ—Այո, ուշանում ենք, գնանք: (Կանգնում են):

ՄԻՍԱՔ—(Կանգնելով) Օրիորդներ, նստեցէք, հիմի կգայ:

ԵԻԳԻՆԷ—Ձէ՛, ի՞նչպէս նստենք, ուշացանք:

ՄԻՍԱՔ—Գնամ մէկ անգամ էլ տեսնեմ: (Գնում է):

ԵԻԳԻՆԷ—Օ՛հ, Մարիամ, ես նոր իմացայ, որ դա ծառայ չէ, գիւղացի չէ, այլ ուսումնագէտ, քաղաքակրթւած մի տղայ. լսեցի՞ր ընթերցանութիւնից խօսեց:

ՄԱՐԻԱՄ—Ապա, Եւգինէ, ես ասում էի, դու ասում էիր, չէ, Վարդանի ծառան է:

ԵԻԳԻՆԷ—Այո, Մարիամ, ես, ասում էի, որ ծառայ է. որովհետեւ Վարդանի ծառային շատ նման էր: Այ, հիմի Վարդանը ծառայով կգայ կտեսնես, թէ ռոքան նման է:

ՄԱՐԻԱՄ—Բայց այնքան չէիր մտածում, թէ ծառան այդպէս կլինի. խօսալուց, վարմունքից արդէն երևում էր, որ դա ծառայ չէ, դպրոցում սովորող մի տղայ է: Բայց ափսոս որ չհարցրեցինք, թէ որ դպրոցն է աւարտել. երևում է որ մեծ դպրոց աւարտած կլինի:

ԵԻԳԻՆԷ—Համալսարան աւարտած կլինի:

ՄԻՍԱՔ—(Ներս մտնելով) Ներողութիւն օրիորդներ, Վարդանը չկայ, չի երևում:

ԵԻԳԻՆԷ—(Կանգնելով Մարիամին) Վեր գնանք բաւականին ուշացանք:

ՄԱՐԻԱՄ—(կանգնում է)

ՄԻՍԱՔ—Գնահում էք օրիորդներ:

ՄԱՐԻԱՄ—Այո, ուշանում ենք:

ՄԻՍԱՔ—Մի քիչ էլ սպասէք:

ԵԻԳԻՆԷ—Ձէ, չենք կարող:

ՄԻՍԱՔ—(Նայում է, Մարիամին և Եւգինէին, ապա նայում է ժողովրդին և գլուխը շարժում է...):

ՄԱՐԻԱՄ—(Միսաքին) Ներողութիւն, մենք գնում ենք, Երբ Վարդանը կգայ, խնդրում եմ ասացէք, որ գայ մեզ մօտ:

ՄԻՍԱՔ—Շատ լաւ:

ՄԱՐԻԱՄ—
ԵԻԳԻՆԷ—

ՄԻՍԱՔ—Ցտեսութիւն: (Մինչև միջանցքը ճանապարհ է դնում, ապա վերադառնալով դուռը փակում է)

Տ Ե Ս Ի Լ VI.

Միսաք. «մենակ»

ՄԻՍԱՔ—«Ծիծաղելով» Հնա, հնա, հնա, հնա. մի գեղացի ծառայ ըսենց գայ քաղաք, մարդու չեղբի ընկնի. օրիորդների հետ ծանօթանայ, նրանց հետ խօսալ իրեն աղի տեղ դնի, իսկ իրեն աղին ծառայի տեղ, ընենց հաւատացրի, որ էլ չեմ կարող ասել, ասում էի, արտասահմանի կարգացողներից եմ, դէ ի՜նչ, արտասահմանը երազով էլ չեմ տեսել: Համա ընենց ասեցի, որ հաւատացին: Առաջուց էն մինը չէր հաւատում, համա տեսաւ չէ, ոնց որ դուզ ասելիս ընեմ, նա էլ հաւատաց: Տօ հօ ես չէի գնում, իմանալու թէ Վարդանը գալիս է, ես չի գալիս. հնա, դարդս կտուել էր: Դուրս էի գնում, դռան մօտ սպասում, և խօսածները ականջ դնում: Է՛, յետոյ, թէ անունս էլ Միսաք էր, փւխեցի Ալեքսանդր, թէ Փամիլէս էլ Շահբազեան էր, փոխեցի Իշխանեան: Հմի նրանք պտի կարծեն, թէ ի՜նչ իշխանների թոռն

եմ: Եւ հէնց որ էդ էլ ասեցի, լաւ հաւատացին. յետոյ ասեցի, ես գրքեր եմ կարդացել. դուք ինչ էք կարդացել: Էդ էլ որ ասեցի, էլ տեղ չմնաց: Դէ ի՜նչ դորթ ա, ասում եմ, համա չեն իմանում, որ գրի սև ու սպիտակն էլա չեմ ջոկում. (ծիծաղելով) հա հա հա... համա շատ լաւ ըլաւ է՛... (շորերին նայելով) էս էլ որ չլէր, էլ չէին իմանայ, որ ես քաղաքացի եմ, Համա էն. էն էն, էն մեռած մէկր. էն էն մէկր չէր ուզում ինձ հետ հաշտեի, էլի՛... Այ Վարդանի շորերն է. չես գիտայ ի՜նչ...ր՛ ր՛ (պառլզաւ լրջանալով). Համա էս շորերը հանեմ. հիմի կարող է, Վարդան աղէն գայ, հաղար բան կասի, և հլա վզակոթիս մի քանի հետ էլ կզարկի: Ձէ, հանեմ: (սկսում է հանել) Ա՛խ Աստուած, տեսնաս ես էլ սրանից կառնեմ: էս մի քանի ամսուայ փողջպիտի առնեմ, հէնց մենակ շորեր պտի առնեմ: Ա՛խ, իմ դժբաղդն էն է, էսօրայ էս աղջկերքը ինձ չտեսնաւ և չասեն, թէ ծառայ ա, թէ չէ, ես ամօթից, որն էլ, նամսից գեղքից կմտնեմ: «Շորերը տանում և իր տեղը դնում»: Ընենց դնեմ, որ Վարդան աղէն չիմանայ. (Դնելով իւր տեղը և ապա ժողովրդին): Համա մի բան էլ ասեմ, որ Վարդան աղէն մի քիչ բարի սիրտ էլ ունի: Նա որ չը չլէր, ես հօ չէի ծանօթանալ էս օրիորդների հետ: Համա շատ լաւ սիրուն էին հա... (կանգնում. է պառլզաւ) րհը, չի թէ Վարդան աղէն եկաւ, ձէն ա գալիս: (լարած ականջ է դնում) Ըհը՛, գալիսա, նա ա՛յ ուրախ ա, ով ա գիտում, իմացն ա, որ աղջկերանցը լաւ պատասխան եմ տուել: (Մօտենում է դռանը) Վարդան աղայ...

Տ Ե Ս Ի Լ V.

Նոյն, Վարդան, Մարիամ և Եւգինէ.

ՄԱՐԻԱՄ— (Ներս են մտնում ծիծաղելով, և սկսում են
ԵԻԳԻՆԷ—) Միսաքի վրայ ծիծաղել: ՄԻՍԱՔ—(Գնում է, և մի անկիւնում պահում):

ԵՒԳԵՆԷ—(Մարիամին) Տեսա՞ր Մարիամ, բա որ ես ասում էի...

ՎԱՐԴԱՆ—Ներս է տեսում, և ծիծաղելով ասում) Ալեքսանդր Իշխանեան...

ՄԻՍՍԷ—Վա՛յ, Վարդան աղայ. քու տունը քանդուի, ինձ խայտառակեցիր իմ ծանօթների մօտ...

Վարագայր



Գրած է՝ 1913 թիւ, Մայիս
Երևան:

ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԾԵՐՈՒՆ ՎԻՐԱՅԵԱՆԻ

Մեղեդիներ «սպառնաժ»	10	կ.
Էջի դերձակ վող. մէկ արարւածով	10	կ.
Միսաք » » »	7	կ.

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.

Յանկայողները դիմեն հեղինակին, կամ հայ գրավա-
ճառներին:

Հեղինակի հասցէն՝ Эривань Астафьевская № 82.